

Ֆինանսական օժանդակության քաղաքականության սեղմագիր

Ֆինանսական օգնությունը հասանելի է այն հիվանդներին, ովքեր ի վիճակի չեն վճարել հիվանդանոցի տրամադրած խնամքի ողջ արժեքը կամ դրա մասը: Այս սեղմագիրը հակիրճ կերպով ներկայացնում է՝ որ դեպքում է ֆինանսական օգնությունը հասանելի և ինչպես դիմել դրա համար: Լիարժեք տեղեկատվության համար խնդրում ենք ծանոթանալ հիվանդանոցի «Ֆինանսական օժանդակություն - Ջեդչերի և Բարեգործական խնամքի մասին քաղաքականություն» փաստաթղթին (Ֆինանսական օժանդակության քաղաքականություն):

Իրավունակության պահանջներ

Բարեգործական խնամք. Պացիենտները, ում եկամուտն դաշնային աղքատության շեմի 200%-ից ցածր է, և ովքեր չունեն իրենց հաշիվները վճարելու բավարար միջոցներ, կարող են ունենալ անվճար խնամքի իրավունակություն:

Ցածր եկամուտ ունեցող անձանց ֆինանսական օժանդակություն. Պացիենտներ, ում եկամուտը դաշնային աղքատության շեմի 350%-ից ցածր է, և ովքեր չունեն ապահովագրություն, կամ ունեն բուժսպասարկման դիմաց ներկայացված բարձր հաշիվ, կարող են զեղչված սակագնի իրավունակություն ստանալ: Ջեդչված խնամքի իրավունակություն ունեցող անձինք կարող են վճարման ծրագիր բանակցել Հիվանդանոցի հետ և նրանց ներկայացվող հաշվեգիրը կկազմվի Medicare-ի սակագնից ոչ ավելի բարձր սակագնով (կամ Medi-Cal-ի սակագնից, եթե Medicare-ի կողմից հաստատված սակագին չկա):

Ինչպես դիմել

Ֆինանսական օժանդակության կարելի է դիմել՝ լրացնելով Ֆինանսական օժանդակության դիմում (Դիմում) և այն ներկայացնելով Ֆինանսական ծառայությունների վարչություն: Ընտանեկան եկամուտը հիմնավորելու նպատակով հնարավոր է, որ դիմողից պահանջվի ներկայացնել աշխատավարձի վճարման վերջին կտրոնները կամ հարկային հայտարարագրերը: Բարեգործական խնամքի համար դիմողին կարող են նաև խնդրել տրամադրել իր միջոցների մասին տեղեկատվություն, և լիազորել Հիվանդանոցին՝ այդ տեղեկատվությունը վավերացնելու նպատակով դիմել ֆինանսական կամ առևտրական հաստատությունների:

Ամբողջական քաղաքականության տեսան ու Դիմումի օրինակը ձեռքբերելը

Ֆինանսական օժանդակության քաղաքականության և Դիմումի օրինակները կարող եք գտնել մեր կայքում՝ www.barlowhospital.org, կամ Հիվանդանոցի ընդունարանի աշխատակիցներից: Եթե ցանկանում եք Ֆինանսական օժանդակության քաղաքականության և Դիմումի անվճար օրինակները ստանալ փոստով, ապա խնդրում ենք դիմել Ֆինանսական ծառայությունների վարչություն:

Հարցերով, կամ օգնության համար խնդրում ենք դիմել Ֆինանսական ծառայությունների վարչություն

Հիվանդանոցի ֆինանսական օժանդակության ծրագրի մասին լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Ֆինանսական ծառայությունների վարչություն՝ Stadium Way-ի մեր Հիմնական համալիրում (213-250-4200, ապա հավաքել 3329), իսկ ֆինանսական օժանդակության դիմումը լրացնելիս օգնության համար խնդրում ենք դիմել Պացիենտների ֆինանսական ծառայությունների մեր հեռամատակարարին:

Տրամադրվում են թարգմանչական ծառայություններ

Քաղաքականությունը, դիմումն ու այս սեղմագիրը կարող են տրամադրվել նաև իսպաներեն և հայերեն: